ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

15/08/2022 - 30/08/2022

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 3 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 3 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

3 կողմ

6 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

31/08/2022

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 30.08.2022 19:39:16	Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, համաձայն որի «տարեկան ծրագիրը ներառում է բյուջետային տարում իրականացման ենթակա միջոցառումների, ծրագրերի, գործողությունների ամբողջությունը համալիր ծրագրի շրջանակներում»: Տարեկան ծրագիրը ենթակա է հաստատման միայն Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համալիր ծրագրի ընդունումից հետո: Չնայած բազմաթիվ առաջարկությունների առկայությանը, Ներառական իրավական բարեփոխումների	Ներկայումս մշակվել և վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը քննարկման փուլում է: Տարեկան ծրագրում ներառված միջոցառումները բխում են վերոնշյալ համալիր ծրագրի	

		կոալիցիան առաջակությունները կներկայացնի միայն օրենքի պահանջների բավարարմամբ տարեկան ծրագիրը հանրային քննարկման ներկայացնելու դեպքում:	նախագծից:	
2	Կարեն Աբրահամյան 16.08.2022 13:03:02	Նախագծի մշակման ընթացքում խնդրում եմ հաշվի առնել այն հանգամանքը, որ հաշմանդամության բոլոր խմբերի' առաջին, երկրորդ և երրորդ,նպաստը հավասար է' 28.600 դրամ:Իմ կարծիքով պետք է տարբերակում լինի ըստ խմբերի,հասկանալի է,որ այդ գումարը որոշակի աջակցություն է,բայց ինչպես կարող է 1-ին խմբի հաշմանդամ անձն ունենա նույն սոցիալական աջակցության կարիքը,ինչ որ 3-րդ խումբն ունի, կամ հակառակը:	Առաջարկը սույն նախագծով կարգավորման առարկա չէ:	
3	"Տնտեսական իրավունքի կենտրոն" Հասարակական կազմակերպություն 15.08.2022 14:58:56	Ներկայացված օրինագծին դեմ եմ քվեարկել հետևյալ պատճառաբանությամբ. 1. հիմնականում հավանություն տալով կառավարության որոշման ու 2023 թ. ծրագրի նախագծերին, չէի կարող կողմ քվեարկել, քանի որ դրանց հետ միասին չի կցված ծրագրի իրականացման գործողությունների ու միջոցառումների ցանկը, 2. օրինագծի վորդային ֆայլը չի բացվում՝ տեխնիկական թերությունների պատճառով, 3. ծրագրի իրականացման գործողությունների ու միջոցառումների ցանկը չկարողացա	Համապատասխան շտկումները կատարվել են: Ինչ վերաբերում է հիմնավորման մեջ ամրագրված այն ձևակերպմանը, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերի մեջ էական ավելացումներ չեն նախատեսվում, ապա տեղեկացնում եմ, որ տարեկան ծրագրում ներառված են այն միջոցառումները, որոնք արդեն իսկ ընդգրկված են բյուջետային հայտերում: Իսկ e_draft-ում	

		հայտնաբերել նաև օրինագծի ՊԴՖ ձևաչափով ֆայլի մեջ, 4. ծրագրի իրականացման գործողությունների ու միջոցառումների ցանկի բացակայությունը թույլ չի տալիս մեզ գնահատելու ծրագրի իրականացման արդյունավետությունը: Դա հաշվի առնելով հարավոր չի լինում արդյոք պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվելու, 5. վերահիշյալի համատեքստում համաձայն չենք հիմնավորման մեջ գրված այն եզրկցաության հետ, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերի մեջ էական ավելացումներ չեն նախատեսվում, 6. հիմնավորումից բխում է, որ օրինագծի մշակմանը չեն ներգրավվել քաղաքացիական հասարկության ներկայացուցիչներ, այդ թվում նաև ՀՀ ԱՍՀ նախարարին կից քաղաքացիական հասարակության խորհրդի կազմից ՀԿ-ների ներկայացուցիչներ: Մովսես Արիստակեսյան Տնտեսական իրավունքի կենտրոն ՀԿ նախագահ	տեղադրելը հանրային քննարկման եղանակներից է:	